ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԻՐԱՔԱՀԱՅ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ

Փետրուար 10 և 11 1999 թուին, Սրբոց Վարդանանց Տօնին առթիւ, քահանայական կոչում և ձեռնադրութիւն տեղի ունեցաւ Պաղտատի Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Թեմիս բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Աւագ արքեպս. Սսատուրեանի:

Փետրուարի 10-ի երեկոյեան տեղի ունեցաւ «Յերոկոյէ կոչումն քահանայութեան» կարգը՝ խարտաւիլակութեամբ արժ. Տ. Նարեկ քհնյ. Իշխանեանի, որը վկայեց նորընծաներու հոգևոր և իմացական կարողութեանց ու արժանիքներու մասին՝ հայցելով առաջնորդ Սրբազան Հօր հաւանութիւնը զանոնք արժանացնելու քահանայական աստիճանին:

Նորընծաները խոստացան «յանձն առնուլ և կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն ու հայրապետացն և կալ ըստ կանոնաց նոցա», «ամենայն պատրաստութեամբ և առանց ծանծրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ» և պահել «զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ, ընդ սուրբ հայրապետսն ըստ երից սուրբ ժողովոց»: Յաւարտ քահանայական կոչման արարողութեան, նորընծաները հրապարակաւ արտասանեցին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ «Հաւատոյ խոստովանութիւն»-ը ըստ Ս. Գրիգոր Տաթևացիի սահմանած բանաձևին:

Քահանայական ձեռնադրութիւնը և օծումը կատարուեցաւ փետրվարի 11-ին, Սրբոց Վարդանանց տօնին առիթով կատարուած Ս. Պատարագի ընթացքին: Հոծ բազմութիւն մը փութացած էր Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին: Իրաքի զանազան հայաշատ կեդրոններէն ևս բազմաթիւ հայ հաւատացեալներ ժամանած էին Պաղտատ: Ներկայ էին նաև քոյր եկեղեցիներու համայնքապետեր և բարձրաստիճան հոգևորականներ:

Նորընծաներու կնքահայրերը հանդիսացան Պաղտատի ծանօթ դէմքերէն տիարք Ս. Աճեմեան և Ն. Օհանեանը:

Օրուայ պատարագիչն էր թեմիս բարեխնամ առաջնորդ Տ. Աւագ արքեպս. Սսատուրեանը: Ս. Պատարագը շարունակուեցաւ մինչև «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած» աղօթքը, ապա խարտաւիլակ քահանայ հայրը նորընծաները ծնկաչոք առաջնորդեց դէպի Ս. Սեղան, ուր անոնք, հաւատացեալ ժողովուրդին դառնալով, բարձրացուցին իրենց ձեռքերը՝ ի նշան Ուխտի և նուիրումի:

«Աստուածային և երկնաւոր շնորհ» շարականէն ետք Տ. Աւագ արքեպիսկոպոսը դնելով «զաջն ի վերայ գլխոյն նուիրելոյն», իւրաքանչիւրին շնորհեց քահանայական աստիճան:

Յուզիչ էր պահը ու հոգեպարար. բոլոր հաւատացեալները վերացած, ամենայն ջերմեռանդութեամբ կը հետևէին Հայաստանեայց մեր Մայրենի Եկեղեցւոյ դարաւոր արարողութեան, զոր կատարուեցաւ հանդիսաւորութեամբ և ամենայն վայելչութեամբ:

Օծման խորհրդաւոր արարողութիւնը սկսաւ, երբ գերաշնորհ Սրբազան

Հայրը մէկ առ մէկ Սրբալոյս Միւռոնով օծեց իւրաքանչիւր նորընծայի ճակատն ու ձեռքերը՝ վերանուանելով

Նորայր սարկաւագ Յովսէփեանը՝ Տ. Արարատ քահանայ.

Երջանիկ սարկաւագ Շահինեանը՝ Տ. Մասիս քահանայ:

Իր քարոզին որպէս բնաբան, առաջնորդ Սրբազանը ընտրեց Սրբոց Վարդանանց կեցուածքը արտայայտող խօսքը՝ *«Քանզի Հայր մեր զՍուրբ Աւետարան գիտեմք – Մայր մեր՝ զԱռաքելական Եկեղեցի»*՝ խրախուսելով նորաօծ քահանաները մէկ ձեռին ունենալ Ս. Աւետարանը և միւս ձեռին՝ Հայոց Պատմութեան Գիրքը իբրև զիրար ամբողջացնող զէնքեր իրենց հովուական-եկեղեցական և ազգային աշխատանքի ընթացքին:

«Աստուածային և երկնաւոր շնորհ...»

Ապա առաջնորդ Սրբազան Հայրը անդրադարձաւ իր ընտրած Արարատ և Մասիս անուններուն, յայտնելով՝ *«Հայաստանի սրտին վրայ բազմած ու դէպի երկինք խոյացող մեր լեռը Ս. Գրական Վայր է յիշուած Աստուածաշունչի մէջ, ինչպէս նաև խորհրդանիշը կը հանդիսանայ մեր լինելութեան և վկան եղած է հայոց պատմութեան դարաւոր դէմքերուն ու խոյանքներուն, դժուարութեանց և սխրագործութեանց ինչպիսին է Վարդանանց Հերոսամարտը»*:

Պատարագը լրանալէն ետք հաւատացեալները, մօտենալով նորընծաներուն, համբուրեցին նորաօծ աջերը:

Որմէ ետք առաջնորդարանի դահլիճին մէջ խարտաւիլակ արժ. Տ. Նարեկ քահանան նորընծայ քահանաները ներկայացուց առաջնորդ Սրբազան Հօր, ուր անոնք իրենց շնորհակալութեան խօսքը յայտնեցին Նորին Սրբազնութեան, Ազգային Կեդրոնական Վարչութեան, հոգևորականաց դասուն, իրենց ուսուցիչներուն, հաւատացեալ ժողովուրդին խոստանալով հաւատարմութեամբ ծառայել Հայաստանեայց մեր Մայրենի Եկեղեցւոյ և Իրաքահայ Թեմին:

Նորաօծ քահանայ հայրերը 40 օրուայ առանձնացումի շրջանը կ'անցնեն Ս. Կարապետ վանքին (Ազգային Օթևանոց) մէջ հոգևոր պատրաստութեան համար, որմէ ետք պիտի մատուցեն իրենց անդրանիկ Ս. Պատարագը:

ԱՐԱՄ ՍՐԿ. ՔԷԹԷՆՃԵԱՆ